ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ ֆինանսների նախարարության 2017 թվականի մայիս ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2017 թվականի հունվար-մայիս ամիսների ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 12575.7 մլն դրամ՝ պլանավորված 11669.9 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 7.8 տոկոսով կամ 905.8 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 18.8 տոկոսով կամ 1988.1 մլն դրամով:

Մայիս ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 2952.0 մլն դրամ՝ պլանավորված 2794.9 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 5.6 տոկոսով կամ 157.1 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 40 տոկոսով կամ 843.4 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 127 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 3 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության 31 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել է 59.5 մլն դրամ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ:

Հաշվետու ամսում «Հարկերի վճարումից խուսափելու և հարկային իրավախախտումների դեմ պայքարի» հայեցակարգի շրջանակներում իրականացվել են հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ու ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների ճշտության, չձևակերպված վարձու աշխատողների բացահայտման, ապօրինի գործունեության ծավալմանն ուղղված հսկողական միջոցառումներ, որոնց արդյունքում արձանագրվել են հսկիչ-դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների կանոնների խախտման 28, ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների թերհայտարարագրման 12, վարձու աշխատողների չձևակերպման 6 և ապօրինի ձեռնարկատիրական գործունեության իրականացման 2 դեպքեր:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 112 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 85-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 6-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի ու դրոշմավորման կանոնների պահպանման, 4-ական՝ հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի հիմնավորվածության ու «Հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» ԼՂՀ օրենքի համաձայն ճշտված հաշվարկ-հաշվետվություններ ներկայացրած հարկ վճարողների՝ հարկային և այլ պարտադիր վճարների պարտավորությունների արժանահավատության և 13 այլ ուսումնասիրություններ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 167 վարչական գործով սահմանվել է 2338.0 հազ. դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 5983 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 5304:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 68 պայմանագրեր:

Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 140 վարձու աշխատողի՝ 20.7 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 68 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Հաշվետու ամսում ֆինանսների նախարարի հրամանով հաստատվել ու շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության հետ համաձայնեցվել է «Բնապահպանական և բնօգտագործման վճարների եռամսյակային հաշվարկ-հաշվետվությունն էլեկտրոնային եղանակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչություն ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնելու» ընթացակարգը, որով հնարավորություն է ընձեռնվել հարկ վճարողներին նշված հաշվետվությունը երկու կառույցներին ներկայացնել էլեկտրոնային տարբերակով:

Մայիսի 5-ին կայացել է աշխատանքային խորհրդակցություն հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների հետ, որի ընթացքում քննարկվել են 2017թ. հունվար-ապրիլ ամիսների պետական բյուջեի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների պլան-առաջադրանքների կատարման ընթացքի, 2-րդ եռամսյակում կանխատեսվող մուտքերի, «Հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» ԼՂՀ օրենքի շրջանակներում պարտավորությունների մարման գործընթացի ու «Հարկերի վճարումից խուսափելու և հարկային իրավախախտումների դեմ պայքարի հայեցակարգի իրականացման 2017 թվականի միջոցառումների» ծրագրի շրջանակներում իրականացվելիք աշխատանքների վերաբերյալ հարցեր:

ՀՀ և ԱՀ հարկային մարմինների միջև համագործակցության ծրագրի շրջանակներում մայիսի 2-ին Արցախ է այցելել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի պատվիրակությունը՝ կոմիտեի նախագահի առաջին տեղակալի գլխավորությամբ: Հանդիպման ընթացքում քննարկվել են համագործակցության ծրագրով նախատեսված մի շարք հարցեր: Մասնավորապես, փորձի փոխանակում է իրականացվել ՀՀ և ԱՀ հարկային մարմինների կողմից պետական բյուջեի հարկային եկամուտների ավելացման ուղղությունների և ռիսկերի բացահայտման գծով իրականացվող վերլուծական ու հսկողական աշխատանքների մասով:

Հաշվետու ամսում նախարարության վերահսկողական և սպասարկման գործառույթ իրականացնող ստորաբաժանումների երկու աշխատակիցներ մասնակցել են ՀՀ ԿԱ ՊԵԿ ուսումնական կենտրոնի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին: Երկու կառույցների միջև իրականացվել են նաև անուղղակի հարկերի հաշվանցումների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

Հաշվետու ամսում կազմակերպվել են հարկային ծառայության «Գ» և «Դ» խմբերի թափուր պաշտոններ զբաղեցնելու համար կրկնակի բաց և փակ մրցույթներ,

որոնց արդյունքում 6 հաղթող ճանաչված մասնակիցներ նշանակվել են հարկային ծառայության պաշտոնների:

«Հարկերի վճարումից խուսափելու և հարկային իրավախախտումների դեմ պայքարի հայեցակարգի իրականացման 2017 թվականի միջոցառումների» ծրագրի շրջանակներում մայիսի 10-ից 12-ը հարկ վճարողների հետ կազմակերպվել են հանդիպումներ Ասկերանի, Մարտակերտի, Մարտունու, Հադրութի, Շուշիի և Քաշաթաղի շրջկենտրոններում:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 288, ելքագրվել՝ 101 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի: